

### ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԲԱԶՄԱՀԱՏՈՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՏՈՐԸ<sup>1</sup>

Հսկայական է մեծատաղանդ լեզվաբան հայագետ Հրաչյա Աճառյանի գիտական ժառանգությունը. ըստ բովանդակության այն ընդգրկում է հայագիտության գրեթե բոլոր բնագավառները, սակայն նրա առյուծի բաժինը վերաբերում է հայոց լեզվի ուսումնասիրությանը և իր հերթին լայնապարփակ է ու բազմազան:

Հայոց լիզվի ուսումնասիրությունը՝ նյութ ունենալով լեզվի երկար ու ձիգ ուղին, նրա անցյալ ու ներկան, նրա ապշեցուցիչ հարստությունը, կառուցվածքային ինքնատիպությունը՝ ընդհանուր-համաժողովրդական և տեղային-բարբառային տարբերակներում, տրոհվում է տարբեր մասնագիտությունների, որոնցից յուրաքանչյուրին տիրապետելը առանձին կյանք է պահանջում: Աճառյան գիտնականը համադրում էր իր մեջ այլ բոլոր մասնագիտությունները՝ շնորհիվ մեծ ընդունակությունների, առասպելական աշխատասիրության և անսահման նվիրվածության: Նրա ուսումնասիրությունները՝ հայոց լեզվի պատմական բառագիտության ու ստուգաբանության, հայոց լեզվի պատմության, հայ բարբառագիտության, քերականագիտության և այլ բնագավառներում անմահ կոթողներ են:

Հիսունհինգ տարի տևած գիտական գործունեության ընթացքում հրատարակված 200-ից ավելի աշխատություններով (որոնցից մի քանիսը մեկից ավելի հատորներից են բաղկացած) մեծ գիտնականի գիտական ժառանգությունը չի սպառվում: Հր. Աճառյանը մեզ թողեց նաև բազմաթիվ անտիպ աշխատությունների պատկառելի մի գանձ, որտեղ, ինչպես գրում է պրոֆ. է. Բ. Աղայանը, ամենակարևորը «Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների» բազմահատոր մենագրությունն է<sup>2</sup>, որի հրատարակումն իրագործում է Հայկական ԱՍՌ Գիտությունների ակադեմիան:

Այս վիթխարածավալ աշխատությունը (10 մեծ հատոր) ստեղծվել է հեղինակի գրեթե ողջ գիտական գործունեության ընթացքում:

Աշխատության մեծ արժեքը պայմանավորվում է բննարկվող հարցերի գիտականությամբ և հետազոտման ճիշտ մեթոդով, կարևոր է նաև այն, որ հեղինակը լայնորեն օգտագործել է թե՛ իր և թե՛ ժամանակակից գիտնականների շատ ուսումնասիրություններ: Սակայն պետք է ցավել, որ նա չհասցրեց վերջնականապես մշակել այս արժեքավոր գործը:

Այժմ արդեն հրատարակի վրա են աշխատության 4 հատորները, որոնցից մեկը ներածական հատորն է. Ափսոսանքով պետք է նշել, որ հրատարակչական հանգամանքներով չի պահպանվել հատորների նախատեսված հաջորդականությունը, որը որոշ դժվարություն է առաջացնում օգտագործման տեսակետից:

Ներածական հատորը (1955) ունի միայն ընդհանուր լեզվաբանական բնույթ, որտեղ բննարկվում են լեզվի էությունը, ծագման ու զարգացման, լեզուների դասակարգման հարցերը: Թուն քերականությանը հեղինակն անցնում է առաջին հատորից, որը հրատարակվել է իր կենդանության օրոք (1952) և ընդգրկում է երկու խոսքի մաս՝ ածականը և թվականը, իսկ երկրորդ հատորը (1954) նվիրված է դերանունների ուսումնասիրությանը:

Ցուրաբանչյուր խոսքի մաս ու նրան հատուկ քերականական ամեն մի կարգ ներկայացվում են բննարկման երկր բաժիններով՝ ա) ընդհանուր լեզվաբանական բննարկում, որտեղ տրվում է ընդհանուր ծանոթություն, բացատրվում է լեզվական տվյալ իրականությունը, ապա այն պիտվում է հայերենին ոչ ազգակից աշխարհի այլ լեզվաբանական իրականությունների նույնանման իրականությունների ֆոնի վրա, բ) պատմահամեմատական բննարկում՝ ազ-

<sup>1</sup> Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հատոր 3, Երևան, 1957, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1011 էջ:

<sup>2</sup> Նույն աշխատության «Ներածություն» հատոր, Երևան, 1955, էջ 17:

զակից՝ հնդկավրոպական լեզուների համապատասխան փաստերի շարադրությամբ՝ ծագման ու զարգացման պատկերը տալու նպատակով, գ) պատմական և մասամբ էլ ստատիկ քննարկում, որին բաժին է ընկնում հետազոտության ամենահիմնական մասը. այստեղ լեզվի հետազոտվող իրականությունը քննարկվում է հայկական հողի վրա, հայոց լեզվի պատմության ընթացքի մեջ, տրվում են նրա նկարագրությունն ու վերլուծությունը գրաբարում, միջին հայերենում, աշխարհաբարի արևմտյան ու արևելյան հատվածներում և շատ բարբառներում, որոնք ուսումնասիրված են և՛ ընդհանուր առմամբ հնդկական գերազանցապես օգտագործում է ուրիշ ուսումնասիրողների ընթացում փաստերը, ապա մյուսներում և մանավանդ վերջինում մեծ տեղ են զբաղում անձնական սրբություններով վեր հանված փաստերը՝ նյութի այդպիսի ընդգրկումը, դասավորությունն ու քննարկումը աշխատությանը տալիս են ընդհանուր լեզվաբանական, պատմահամեմատական և պատմական համադրական բնույթ, որպիսին նորություն է լեզվաբանական գրականության մեջ:

Նյութի ընդգրկմամբ ու քննարկվող հարցերի յուրահատկությամբ, յուրաքանչյուր հատորում որոշակի գիտական արժեք է Սակայն մինչ այժմ հրատարակվածների մեջ առավել արժեքավորը գրախոսվող (3-րդ) հատորն է, որն ըստ էության կազմում է ձևաբանության առաջին հատորը և բովանդակությամբ նախորդում է լույս տեսած մյուս երկու հատորներին: Այստեղ էլ նյութը քննարկվում է վերոհիշյալ սլոնով, բայց, ինչպես սպասելի էր, հատորն օժտված է նաև ներածական գլուխներով, որոնք չափազանց կարևոր են ոչ միայն այս հատորում հետազոտվող գոյական անվան, այլև մյուս խոսքի մասերի և ընդհանրապես բերականության լուսարանման համար: Այդպիսի գլուխներ են՝ «Ձևաբանության վրա ընդհանրապես», «Քերականական կարգեր», «Խոսքի մասեր», «Տոն կամ շեշտ իբրև ձևակ», «Ձայնդարձ», «Աճում», «Կրկնություն», «Մասնիկների և վերջավորությունների գործածության մասին», «Բարդություն», ինչպես նաև թվի ու սեռի ընդհանուր հարցերին վերաբերող գլուխներ:

Նշված ներածական գլուխներում բնորոշվում են ձևաբանությունը, բերականական կարգերը, բնութագրվում ու նկարագրվում են լեզվական-բերականական միջոցները, որոնց հնդկական ձևակ անվանումն է տալիս: Ուշագրավ են ձայնդարձին, աճմանը, կրկնությանը և բարդությանը վերաբերող գլուխները. որոնց մեջ քննարկվող համապատասխան երևույթները դիտվում են որտեղ և լեզվական-բերականական միջոցներ, օակայն միշտ չէ, որ հատկությամբ սահմանազատվում են բերականականն ու ընդհանուր բառակազմականը:

Բնութագրելով ձայնդարձը ընդհանրապես և հիշատակելով համապատասխան փաստեր ուղրո-ֆիննական, թուրքական, սեմական և այլ լեզուներից՝ հնդկական այնուհետև կանգ է առնում հնդկավրոպական ընդհանուր շրջանի հիմք լեզվի (նախալեզվի) ձայնդարձի վրա. նա ընդգծում է, որ այստեղ ձայնավորների փոփոխության երեք աստիճանները՝ շ օ 0 (զրո)՝ գործում էին թե՛ արմատում և թե՛ մասնիկների մեջ, իսկ այդ երևույթը հիմնականում ձևաբանական, ինչպես և բառակազմական միջոց էր. սակայն այս գրությունը երկար չի պահպանվում և նույնությամբ չի փոխանցվում անխտիր բոլոր դուստր լեզուներին: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ արմատի զանազան նշանակությունները միայն ձայնդարձով չէին արտահայտվում. ձայնդարձին զուգակցվում էր և մասնիկավորումը, իսկ վերջինս հետզհետև ֆունկցիայի գերակշռություն է ստանում: Մարդկությանը հայտնի հնդկավրոպական լեզուներում պահպանվել են ձայնդարձի որոշ հետքեր: Ձայնդարձը ներկայացնող շատ օրինակներ կան սանրսկրիտում և մանավանդ հին հունարենում, բնորոշ օրինակներ են պահպանվել նաև գերմանական որոշ լեզուների (գոթերեն, գերմաներեն, անգլերեն, շվեդերեն) բայական համակարգում և այլն: Հայերենը ծագմամբ լինելով հնդկավրոպական լեզու՝ նույնպես պահպանել է հետքեր ձայնդարձի երևույթից, որոնց վրա մանրակրկիտ կերպով կանգ է առել հնդկական: Ձայնդարձն իբրև ձևաբանական երևույթ հայերենից վերացել է. նրա հետքերը կան հին հայերենի ն-ով հանգող բառերի հոլովման մեջ, որտեղ-ի՛ն (հարսին),-ու (հարսուներ),-ան (հարսանց) ներկայացնում են հնիս. -ոն և ու: Կի՛ն բառի հոլովումը ներկայացնում է լ— ձայնդարձը: Խոնարհման մեջ ձայնդարձի հետք են արտացոլում տալ բայի ձևերը՝ տաս, ևտու, տուր, կան մասնավոր բառաձևեր, որոնք արտացոլում են ձայնդարձի երեք աստիճանները, ինչպես՝ ոտն, հետ, հետու, յա-սուկ,— հեղու, ողողել, հալել,— սին, սուն, սան և այլն: Օգտագործելով հայագիտությանը վաղուց հայտնի փաստերը և զբաղեց վրա ավելացնելով նորերը՝ Հր. Աճառյանը եզրակացնում է՝ «Այս օրինակները ցույց են տալիս, որ հայերենը երբեմն հին ձայնդարձի բոլոր աստիճաններն

\* Գան նաև այլ, ոչ շատ տարածված տիպեր:

էլ պահած է եղել, բայց դա հայերենի մեջ ձևարանական ոչ մի նշանակություն չունի այլևս և այժմ կրկնակ ձևերից յուրարանչյուրը մեզ համար առանձին ու անկախ արմատ է համարվում» (էջ 34): Այն, ինչ զբարարի բերականության մեջ երբեմնի հնչյունափոխական օրինաչափության հետք էր, արդի շրջանում բերականական ոչ մի դեր չունի. իսկ ծայնդարձով առաջացած տարբերակները արմատների մեջ դրարարում էլ արդեն անկախ էին և ներկայանում էին իրրև առանձին արմատներ: Հայկական հոգի վրա ծայնդարձի օրենքով նոր բառեր չեն կազմվել: Այստեղից էլ նկատվում էր. Աճառյանը ծայնդարձի ուսումնասիրությանը խոշոր նշանակություն է տալիս հատկապես ստուգարանական նպատակների համար: Չնայած իր իսկ ճշայնքն արմատական բառարանս-ի հարուստ նյութը՝ հեղինակը տալիս է հայերենի արմատներում արտացոլված ծայնդարձի երևույթի ամփոփ պատկերը: Բերում է ծայնդարձն երկու կամ երեք աստիճանով արտացոլած հայերեն արմատների ցուցակը՝ կատարված Գր. Գարեգինյանի աշխատակցությամբ: Սա սոսկ մի ցուցակ չէ, այլ ուրույն գիտական աշխատանք, որտեղ ոչ միայն ավելի հիմնավորվում են շատ ստուգարանություններ, այլև վերանայվում ու ճշտվում են առանձին ստուգարանություններ և առաջադրվում են նորերը:

Անցնելով աճականի բնությունը՝ հեղինակը գիտական գրականության մեջ առաջին անգամ սխառնավոր կերպով ուսումնասիրում և ի մի է բերում հայերենի աճականները՝ հնագույն արմատների հավելյալ հնչյունները (թվով 24): Այդպիսի ուսումնասիրություն մինչ այժմ կատարված չէ ինչպես հնդեվրոպական ընդհանուր շրջանի, այնպես էլ այդ բնույթի մեջ մանող առանձին լեզուների համար, մինչդեռ դա շատ կարևոր է: Այս գլխում առաջադրվում են համալրատասխան միջոցներ ու եղանակներ աճականների որոշման համար:

Ճոխ և խոր են կրկնությունն ու բարդությանը նվիրված զրույթները: Փաստառատ ու բովանդակալից են հատկապես հայոց լեզվին նվիրված մասերը: Այստեղ հեղինակը ցուցաբերել է հետազոտողի փայլուն օրինակ: Հայերենի կրկնավորների վերաբերյալ Հր. Աճառյանը մի ուսումնասիրություն է հրատարակել «Հանդէս ամսօրնայ»-ում դեռ 1899 թ., որը լրացրել և տեղադրել է այստեղ. ընդհանուր ֆունի վրա էլ ավելի է բարձրացել նրա արժեքը:

Հեղինակը շատ պարզ պատկերացրել է, որ ընթերցողի համար պատմահամեմատական մեթոդով կատարվող հետազոտությունը ավելի ըմբռնելի դարձնելու տեսակետից խիստ անհրաժեշտ է հնդեվրոպական բերականական բների և մասնիկների նկարագրերը: Եվ այդ նա կատարել է պարզ ու մատչելի կերպով: Դրանց մասին շատ է գրվել օտար լեզուներով, իսկ հայերենով մինչ այժմ ոչ մի ամփոփ նկարագրություն չի տրվել, եթե չհաշվենք այն հատ ու կենտ գիտությունները, որոնք արվել են զանազան առիթներով: Պատմահամեմատական ուսումնասիրությունների մեջ այս ուղղությամբ ամենալավն ու լրիվը Ա. Մեյլի գործերն են, որոնք, ցավոք, հայերեն թարգմանված չեն:

Հատորի երկու երրորդից ավելին ընդգրկում է գոյականի ու նրան հատուկ բերականական կարգերի ուսումնասիրությունը: Այստեղ վերահիշյալ մեթոդով ուսումնասիրված են հոլովման ու հոլովի, թվի բերականական կարգերը. վերջում որոշ տեղ է հատկացված հոգերին:

Հոլովումն իրրև բերականական երևույթ ըստ էության է մտրի հազորդման պահանջից և արտահայտում է բառերի որոշ կարգի առնչություններ: Դրա զանազան դեպքերը լեզվի մեջ ունենում են համապատասխան գրականություններ և անբաժան են հոլովի կարգից: Հոլովական գրականությունների մասին հեղինակը գրում է. «Այն մասնիկները, որոնք կցվելով անուններին կամ դերանուններին, որոշում են նրանց զանազան առնչությունները ուրիշ բառերի հետ, առանց սակայն նրանց հիմնական իմաստը փոխելու և միայն մի հանգամանք կամ պարագա են ավելացնում նրան. կոչվում են հոլովական մասնիկներ, իսկ այն բառը, որին կցվել է հոլովական այս կամ այն մասնիկը, նրա հետ վերցրած դառնում է հոլով» (էջ 312): Անդրադառնալով հոլովման առաջացման հարցին՝ հեղինակը պաշտպանում է այն տեսակետը, ըստ որի հոլովումը առաջացել ու զարգացել է սպասարկու բառերի բերականական որոշ տիպի առնչությունների արտահայտման հիման վրա. հոլովական մասնիկները գոյացել են երբեմնի անկախ բառերից՝ լեզվի մեջ շատ երկար ժամանակ գործածվելով. մաշվելով ու ձևափոխվելով: Հետագայում առանձին լեզուներում լինում են և ուրիշ պրոցեսներ. կան լեզուներ, որոնց երբեմնի մասնիկավոր հոլովումը ժամանակի ընթացքում բարանում ու մեղմում է, և զալիս է մի շրջան, երբ այդպիսի լեզուները հոլովական իմաստների գրականության համար նորից ապավինում են սպասարկու բառերին: Կան և այլ երևույթներ:

Օգտագործելով բազմաթիվ ուսումնասիրություններ տարբեր լեզուների մասին՝ Հր. Աճառյանը հատկապես հետամուտ է եղել հոլովների ձևափոխության տեսակների պարզաբանմանն ու ցուցադրմանը: Ամփոփելով իրեն մատչելի գիտական գրականության տվյալները՝ նա նշում է,

որ աշխարհի լեզուներում հոլովների գանազան տեսակները հասնում են 70-ի: Ընթերցողը շատ հետաքրքրական փաստեր կարող է գտնել այստեղ դրանց արտահայտման բազմազան ձևերի, ինչպես նաև իմաստների վերաբերյալ:

Ավելի կուռ պատկեր ունի հոլովման ու հոլովի բերականական կարգերի նկարագիրը հնդկա-բուսական լեզվաբանության հատկացված բաժնում: Այստեղ օգտագործված են պատմահամեմատական մեթոդով կոտարված ուսումնասիրություններով այդ ուղղությամբ ձևեր բերված նվաճումները: Լինելով այդ մեթոդի լավագույն կիրառողներից մեկը՝ Հր. Աճառյանը ընթերցողին է մատուցում այն հիմնականը, որով հնարավոր է դառնում ճիշտ պատկերացնել մի շարք լեզուների ծագումնաբանական ընդհանրությունները ըստ հոլովման և հոլովների: Այդ նպատակով նա կանգ է առնում ոչ միայն հնդկարուսական ընդհանուր շրջանի հոլովման բնորոշ կողմերը հանդիսացող մասնիկավորման, ձայնդարձի ու տոնի վրա, այլև տալիս է համապատասխան մասնիկների ծագման, զարգացման ու հնչյունական համապատասխանությունների օրենքով կրած ձևափոխությունների պատկերը այդ ընտանիքին պատկանող լեզուներում. նա կարևոր է համարում նաև հետագա գաղացությունների հարցը՝ անկախ ժառանգված ձևերից:

Ինքնաստիճան հասկանալի է, որ այս ամենը հույժ կարևոր են նաև հայերենի հոլովման համակարգի ծագման, կառուցվածքային ընդհանրությունների և հետագա զարգացման իրողությունների բժրոնման տեսակետից: Ամբողջ հետագա շարադրանքի մեջ պարզ կերպով զգացվում է, որ հեղինակը այս հարցերի քննարկումից բխեցրած եզրակացությունները մեծ հմտությամբ ի սպաս է դնում հայերենի հոլովման համակարգի պատմական էվոլյուցիայի դիտական պատկերը ներկայացնելու գործին:

Հայերենի հոլովման համակարգի ամենավաղ փնտհան արտացոլված է մեր հին գրավոր լեզվով ավանդված բաշմաթիվ հուշարձաններով: Այստեղ այն ունի իր ինքնատիպ օրենքներն ու ձևերը, որոնք ուրույն զարգացման արդյունք են, սակայն ծագումնաբանորեն նրա հիմքը հնդկարուսական է: Այս հիմունքով էլ հետևելով հնդկարուսական մասնագետներին՝ Հր. Աճառյանը գրաբարի հոլովման համակարգը բաժանում է ձայնավորահանգ և բաղաձայնահանգ հոլովումների (էջ 399) և տալիս է նրանց բնութագիրը: Սրանք հայերենի մեջ ծավալվելով և տարածվելով բոլոր անունների վրա (չհաշված բացառությունները) իրենց մեջ ընդգրկում են նաև այնպիսի բառեր, որոնք ստուգաբանորեն հնդկարուսական ծագում չունեն կամ ծագումով անհայտ են: Հատկապես պետք է ընդգծել հեղինակի կատարած հմտալից ուսումնասիրությունը այս կամ այն հոլովումների շուրջը խմբավորվող բառերի մեջ օրենքներ բացահայտելու և սահմանելու ուղղությամբ: Մինչ այժմ հայտնի մի շարք օրենքներին ավելացված են նորերը, կատարված են շատ ճշտումներ: Հեղինակը մեծ ջանասիրությամբ հավաստի բառարաններից ու ընտիր քննարկներից հանել է տարբեր հոլովումների ենթարկվող վերջածանց չունեցող բառերը, հետազոտել, ի մի է բերել և ըստ կարելիության որոշել օրենքները (էջ 446—519): Այսպիսով նա միաժամանակ զգալի չափով դուրսին է դարձրել ինչպես գանազան տիպի բացառությունների բացահայտումը որոշված օրենքների հանդեպ, այնպես էլ դրանցից շատերի շեղումների պատճառների բացատրությունը, որը և տվել է ինքը: Արժեքավոր և ուսանելի է նաև հատուկ անունների համար կատարված այդօրինակ աշխատանքը: Սակայն հեղինակը համեստաբար նշում է, որ դեռ դա բոլորը չէ, և այդ ուղղությամբ դեռ անելիք կա<sup>1</sup>:

Մեծ հայազևտի ուսումնասիրության ոլորտից դուրս չեն մնացել նաև մի շարք բառերի հոլովման զուգահեռություններն ու տարբերակները, որոնք նա օգտագործում է հայերենի հոլովման համակարգի պատմական տեղաշարժերի օրինաչափությունները վեր հանելու նպատակով: Եւրոպացի լեզվաբանական մեթոդի մեթոդային շրջանից վկայված այդպիսի փաստերը՝ Հր. Աճառյանը հանգում է հետաքրքրական եզրակացության, ըստ որի մեր լեզվի մեթոդային շրջանը հայերենի հոլովման համար անցման շրջան է, որին նախորդել են և զարգացման այլ շրջաններ, ինչպես և հաջորդել է նոր շրջանը: Այս եզրակացությունը հիմնալի բանալի է մեր լեզվի կառուցվածքի ներքին զարգացման համանման իրողությունները բացահայտելու և բժրոնելու համար: Սակայն, այդուհանդերձ, չի կարելի բացառել այն հնարավորությունը, որ թեկուզ և նույնպիսի զարգացմամբ առաջացած որոշ բարբառային ձևեր կարող էին այս կամ այն կերպ թափանցել նաև դրավոր լեզվի մեջ և հանդես գալ իբրև դրավոր ձևերի տարբերակներ:

<sup>1</sup> Ըստ մեր ունենցած նախնական տեղեկությունների բառերի հոլովման պատկանելիությունների հարցերը հատուկ քննարկման է ենթարկել պրոֆ. Գ. Ջահուկյանը իր գրաբարի հոլովմանը նվիրված աշխատության մեջ, որը տպագրվում է:

Պատմական մոտեցումը հեղինակին հնարավորություն է տվել վեր հանել հայերենի հոլովման համակարգի դարգացման օրինաչափությունները. սրանց ծավալումով առաջացած արդյունքները լեզվի պատմության տարբեր շրջաններում ու բարրառեններում և ցույց տալ, թե ինչպե՛ս ժամանակի ընթացքում անկենսունակ են դառնում որոշ օրինաչափություններ, որոնց երբեմնի լեզվական արդյունքները քարանում ու շարքից դուրս են դալիս լեզվի առաջընթացի ճանապարհին: Դրանց բացատրումն ու հիմնավորումը գիտական են ու համոզիչ: Սրանում խորապես կարելի է համոզվել՝ ծանոթանալով հին հայերենի հոլովման համակարգի էվոլյուցիային և միջին հայերենի, աշխարհարարի ու բարրառենների հոլովմանը նվիրված մասերին: Աշխատության արժեքն է՛լ ավելի է բարձրանում նաև նրանով, որ զարգացման ընթացքը ներկայացնելուց բացի, հեղինակը հիմնավոր ու բնորոշ կերպով տալիս է լեզվի պատմության յուրաքանչյուր շրջանի և շատ բարրառենների հոլովման պատկերը առկա դրությամբ. դրանով ամբողջական պատկերացում է տրվում յուրաքանչյուր շրջանի ու հատվածի հոլովման մասին՝ թե՛ առանձին վերցված և թե՛ ամբողջ լեզվի պատմական ընթացքի մեջ:

Հեղինակը ուսումնասիրել և վարպետորեն ընդգծել է լեզվի տարբեր շրջանների ու բարրառենների ներքին կապը՝ հետազոտվող երևույթների սահմաններում:

Նույն ոգով է շարադրված հոլովման հետ սերտորեն կապված անվանական թվի կարգը. մեծ հետաքրքրություն ունի հայերենի հոգնակիության պատմական զարգացումը, որի քննությանը լայն տեղ է տրված այս հատորում: Հատկապես շեշտված են հայերենին հատուկ այն իրողությունները, որոնք ընդհանուր լեզվաբանական նշանակություն ունեն:

Մեծ է Հր. Աճառյանի բացառիկ աշխատության այս հատորի արժեքը, բազմահարուստ է ընդգրկված նյութը. արժեքավոր են գիտական եզրակացությունները, ուսանելի են ուսումնասիրման մեթոդը, շարադրման եղանակը և այլն:

Հենց միայն այս հատորի լիակատար բնութագրման համար թերևս կպահանջվեր մի առանձին աշխատություն գրել. գրախոսականով տրվող համառոտ նկարագիրը երբեք ու երբեք չի սպառում արժեքավորումն այն մեծ ներդրման, որը կատարված է այս գործով՝ հայագիտության և ընդհանուր լեզվաբանության մեջ:

Հայտնի է, որ պատմահամեմատական մեթոդով մինչ այժմ կատարված ուսումնասիրությունները գերազանցապես ընդգրկել են հայերենի բառային հիմնական ֆոնդը և հնչյունային կողմը, համեմատաբար քիչ ուշադրություն է դարձվել մեր լեզվի բերականական կառուցվածքի համեմատական լուսաբանման վրա: Հր. Աճառյանի աշխատությունը մեծ շափով լրացնում է այդ գաղի բացը, սուկայն այն միաժամանակ սովելին է՝ ընդգրկելով ընդհանուր և պատմական բաժիններ:

Այս աշխատությունը մեծ դեր կարող է խաղալ մասնագետ կադրերի պատրաստման գործում:

Ողջունելի է Գիտությունների ակադեմիայի նախագահության և լեզվի ինստիտուտի ձեռնարկումը մեծ հայպետ Հր. Աճառյանի ձեռագիր ժառանգության հրապարակման գործում: Պետք է գոհունակությամբ նշել պրոֆ. է. Բ. Աղայանի ուշադիր ու հոգատար աշխատանքը ինչպես աշխատության մյուս, այնպես էլ այս հատորի խմբագրման և հրատարակման պատրաստելու ուղղությամբ:

Ա. Ա. ԱՔՐԱՀԱՄՅԱՆ

<sup>1</sup> Հայերենի հոգնակիությանը նվիրված առանձին ուսումնասիրություն ունի պրոֆ. Ա. Ղարիբյանը: